«Նոր ժամանակի կրթություն»
ՀԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Արսինե Նիկողոսյան

Ուսումնական հաստատություն՝ Հ. 64 հիմնական դպրոց ՊՈԱԿ

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն..... 2

Նպատակը և խնդիրները_____3

Արժեքը՝ որպես նորմ..... 4

Արժեքների տարբերակումը_____5

Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հիմնական Գործոնները_____7

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում _____9

Եզրակացություն ..... 22

Օգտագործված գրականության ցանկ_____23

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բոլոր պատմական ժամանակներում անձի ձևավորման պատասխանատու խնդիրը իրականացվել է մանկավարժների գործունեության միջոցով,որը կազմակերպվել է հասարակարգի բնույթին և հեռահար նպատակներին համապատասխան: Դաստիարակության հարցադրումները հասարակության զարգացման ընթացքին համահունչ պարբերաբար վերանայվել են և նպաստել մանկավարժության զարգացմանը: Ժամանակակից հասարակությունը լուրջ պահանջներ է ներկայացնում կրթական հաստատության մանկավարժներին՝ ակնկալելով նրանց ստեղծագործական մոտեցում մանկավարժական գործընթացում, վերակառուցվելու և մշտապես կատարելագործվելու պատրաստակամություն, մանկավարժական վարպետություն՝ սերնդի զարգացման ընթացքում հուսալի սկիզբ հիմնադրելու գործում: Հասարակության կողմից կրթական համակարգին ներկայացվող պետական պատվերը ֆիզիկապես և հոգեբանորեն առողջ սերնդի ձևավորումն է, որի իրականացնողը մանկավարժն է: Մանկավարժն անմիջականորեն չի մասնակցում հասարակական արդյունաբերության գործընթացին, սակայն ձևավորում է մարդ, որը հասարակության նյութական և հոգևոր բարիքների ստեղծողն է, ազգի և պետության հիմնարար արժեքներ կրողը և հասարակության ամենաթանկ հարստությունը: Հետևաբար, մանկավարժի կարևորագույն սոցիալական գործառույթներից է ապագա քաղաքացու գերակա արժեքների նախագծումը և դրանց փոխանցման ուղիների մշակումը:

## ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Երջանիկ է այն երեխան, որն ուրախությամբ և հաճույքով է հաղորդակցվում <<աշխարհ>>-ի հետ, պատրաստ է համագործակցության և հնարավոր դժվարությունների հաղթահարման, փորձում է սեփական գիտելիքներն ու հմտություններն ինքնուրույն կիրառել տարաբնույթ խնդիրների լուծման ընթացքում: Նշված նպատակը համապատասխանում է հեռանկարում ազատ և ձեռներեց անձնավորության, կյանքում ակտիվ դիրքորոշում ունեցող քաղաքացու, արժանապատիվ անհատականության ձևավորման հիմնախնդրին, որն էլ ուսուցչից պահանջում է ուսուցման և դաստիարակության սկզբունքային մոտեցումներ, որոնք ուղղված կլինեն համակողմանի և ներդաշնակ անձնավորության ձևավորմանն ու կայացմանը:

<<Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում>> հետազոտական աշխատանքում փորձել ենք հոգեբանորեն հիմնավորել և նորովի մեկնաբանել դպրոցականի ներդաշնակ զարգացմանն ուղղված դաստիարակության խնդիրները և դրանց կազմակերպման ձևերն ու մեթոդիկան:

Դպրոցականների բարոյական, աշխատանքային և էկոլոգիական դաստիարակության խնդիրները դիտարկվել են որպես երեխայի սոցիալական զարգացման խթաններ և երեխայի սոցիալականացմանը նպաստող գործոններ: Ընդունելով դպրոցականի զարգացման գործընթացում դաստիարակության առաջնայնությունը՝ ուսուցումը ներկայացվել է որպես ուսուցմամբ կազմակերպվող դաստիարակության գործընթաց՝ երեխայի մտավոր զարգացումը և աշխարհաճանաչման ինքնուրույնությունը խթանող: Դպրոցականի ուսուցման խնդիրները մեկնաբանվել են երեխայի իմացական գործունեության ակտիվացման տեսանկյունից:

## ԱՐԺԵՔԸ՝ ՈՐՊԵՍ ՆՈՐՄ

Արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա։

Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են՝ հավատն ու սերը։

Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու։ Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար։ Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են։

Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է։ Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները։

Սիրո մեջ մարդն ավելի պահանջկոտ է դառնում ինքն իր նկատմամբ, ձգտում ինքնակատարելագործման։ Ահա թե ինչու սերը մշակութային և գեղեցիկ երևույթ է։

Հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս։ Բարու, գեղեցիկի, արդարի միասնության սկզբունքը գալիս է Սոկրատեսից,ով փիլիսոփայական գիտելիքը բաժանում է տեսականի /որի կրողը նա համարում է ճշմարիտը/, գործնականի /բարին/, գեղարվեստականի /գեղեցիկը/։

Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ-մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն, իսկ գոյաբանական և իմացաբանական իմաստներով ըմբռնված ճշմարտությունը արժեքաբանորեն չեզոք է։ Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին։ Եթե Արիստոտելն առաջնորդվում էր <<թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է>> սկզբունքով, ապա շատերն առաջնորդվում են << թեև ճշմարտությունը թանկ է, բայց Պլատոնը բարեկամս է>> սկզբունքով[1]

[1] https://hy.m.wikipedia.org

## ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ

Արժեքները բավարարում են սուբյեկտի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Սուբյեկտի արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը: Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցությանը տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների բանահյուսության մեջ: Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ հանրության մեջ բնականոն գործելու համար: Այսպիսով՝ անհրաժեշտ է տարբերակել արժեք-միջոց և արժեք-նպատակ, արժեք-արժանիքներ հասկացությունները, որոնք անձի համար ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիք են, այլ նաև ցանկալի հատկություն: Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է <<անհատ-ազգ>> փոխհարաբերությունների կարգավորման առումով: Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները, մասնավորապես <<հաստատակամություն>>, <<աշխատասիրություն>>, <<համբերատարություն>> և այլն: Պետք է տարբերակել ազգային արժանիքներ հասկացությունը, որում առանձնանում է ազգային-պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքներ՝ արժանապատվություն, արդարամտություն, աշխատասիրություն:

Արժանապատվությունը սեփական <<Ես>>-ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է, անձի ինքնագնահատականը:

Ազգային արժանապատվությունը սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ։

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է։ Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ։ Այսպիսով՝ արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա։

Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է։ Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է։ Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է որևէ էական խնդրի առաջացման։

Այսպիսով՝ պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է։ Այն անհատներն ու ազգերը, որոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները վրա է հասնում ոգու սովը։ Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին[2]։

[2] https://hy.m.wikipedia.org

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Անհատականությունը բնութագրվում է անձի մտավոր, կամային, բարոյական, սոցիալական այլ հատկանիշների միասնությամբ, որոնցով էլ տվյալ երեխան տարբերվում է մյուսներից: Անշուշտ, յուրաքանչյուր երեխա եզակի է և անկրկնելի, իր անհատականությամբ՝ բացառիկ, և համարվում է հասարակության համար բարձրագույն արժեք: Անձի անհատականությունն արտահայտվում է նրա անհատական ինքնատիպությամբ, զգայությունների յուրահատկությունների, ընկալման, մտածողության, հիշողության, երևակայության, հետաքրքրության, հակումների, ընդունակությունների, խառնվածքի, բնավորության զանազանությամբ: Երեխայի անձի ձևավորման ու դաստիարակության գործընթացում նշանակալից և առաջնային դեր է կատարում ընտանիքը, սակայն դպրոց ընդունվելուն պես այդ պատասխանատվությունը հավասարապես սկսում են կիսել մանկավարժները, որոնք սովորողի հետ անցկացնում են նրա օրվա մեծ մասը:

Համաձայն Ա.Ադլերի, իդեալական դպրոցը պետք է միջնորդի դեր կատարի երեխայի ընտանիքի և կյանքի միջև, պետք է լինի այնպիսի վայր, որտեղ երեխան ձեռք է բերում ոչ միայն <<գրքային>> գիտելիքներ, այլև սովորում է <<կյանքի արվեստին>>: Դպրոցը պատասխանատու է սովորողի ներդաշնակ զարգացման և հասարակական բարդ հարաբերությունների մեջ նրա հարմարվողականության համար: Դպրոցական դաստիարակությունը մեծապես նպաստում է մարդու ապագա կյանքի մոդելի ձևավորմանը:

<<...Դպրոցը պետք է <<սովորեցնի ապրել>>, սովորեցնի ապրել նոր ձևով, ընկերական սերտ միաբանությամբ, որ դպրոցը դաստիարակի հոժարակամ կարգապահություն, համատեղ աշխատելու ունակություն, դաստիարակի զգայնություն ուրիշի դժբախտության և վշտի նկատմամբ>>[3]:

[3] Կրուպսկայա, Ուսուցչի մասին, Երևան -1960, էջ185:

Դպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, այն կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից, դրանք են ընտանիք, դպրոց, ընկերներ: Դպրոցական տարիքում սովորողն արդեն ունակ է ճանաչելու առարկաների նմանությունը և տարբերությունը՝ ելնելով նրանց առանձնահատկություններից: Սովորողի հոգեկան և անձնային զարգացման լիարժեքությունը, դրդապատճառների ու պահանջմունքների, հետաքրքրությունների և հակումների, ստեղծագործական մտածողության, սոցիալական ակտիվության, բարոյական ինքնագիտակցության զարգացումը մեծապես կախված է ուսուցչի անձից և նրա արհեստավարժությունից: Ճանաչելով սովորողի անհատական-հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները, իմանալով նրա կենսապայմանները՝ կարելի է արդյունավետ կրթական միջավայր ստեղծել նրա իմացական ներուժի, ակտիվության, ունակությունների, օժտվածության, տաղանդի բացահայտման և զարգացման համար: Անհատական առանձնահատկությունների հաշվառումն ու սովորողի բացառիկության, անկրկնելիության արժևորումը հումանիստական մանկավարժության հիմնարար սկզբունքներից են և սովորողակենտրոն կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման հիմնական պահանջը:

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Ականավոր մանկավարժ Սուխոմլինսկին գրում է. <<Գիտելիքների ամուր հիմքը դրվում է դպրոցում: Այո, փորձը համոզում է այն բանում, որ դպրոցն ամենից առաջ պետք էսովորել սովորեցնի: Այդ մասին գրել են ականավոր մանկավարժներ Յան ԱմոսԿոմենսկին, Կ. Ուշինսկին, Ա. Դիստերվեգը>>: <<Ուսումը չի կարելի հանգեցնելգիտելիքների անընդհատ կուտակման, հիշողության մարզման, բթացնող, թմրեցնող,ոչ ոքի պետք չեկող, և՛ առողջության համար, և՛ մտավոր զարգացման համարվնասակար սերտման: Ես նպատակ դրեցի հասնել այն բանին, որ ուսումը լինի հարուստ հոգևոր կյանքի մի մասնիկը, կյանք, որը նպաստեր երեխայի զարգացմանը,նրա մտքի հարստացմանը: Ոչ թե սերտում, այլ աղբյուրի նման հորդող մտավոր կյանք,որն անցնում է խաղի, հեքիաթի, գեղեցկության, երաժշտության, երևակայության,ստեղծագործության աշխարհում՝ այսպիսին կլինի իմ սաների ուսումը: Ուզում եմ, որերեխաները լինեն ճանապարհորդներ, հայտնագործողներ և ստեղծողներ այս աշխարհում: Դիտել, մտածել, դատողություն անել, զգալ աշխատանքի բերկրանքը նիպարտանալ ստեղծածով, ստեղծել գեղեցկություն և բերկրանք մարդկանց համար և այդ ստեղծվածի մեջ գտնել երջանկություն, հիանալ բնության, երաժշտության, արվեստի գեղեցկությամբ, դրանով հարստացնել սեփական հոգևոր աշխարհը, սրտին մոտ ընդունել ուրիշ մարդկանց վիշտն ու բերկրանքը, ապրել նրանց ճակատագրով՝ որպես խորապես անձնական գործ-այսպիսին է դաստիարակության իմ իդեալը>>[4]: Այո՛, այսպես պետք է սաներին առաջնորդել դեպի շրջապատի իրականության ճանաչում, օգնել տիրապետելու գիտելիքներին, նրանց մեջ արթնացնել մտավոր ընդունակություններ և ամրապնդել ազնիվ զգացմունքներ,դաստիարակել

[4] Սուխոմլինսկի Վ. Ա. Սիրտս նվիրում եմ երեխաներին. Կոլեկտիվ դաստիարակելու մեթոդիկա, Երևան <<Լույս>> 1986:

քաղաքացիական արժանապատվություն, հավատ դեպի մարդկային բարի բնությունը, անսահման նվիրվածություն դեպի հայրենիքը, սեր դեպի հայրենի երկիրը։
Ուսուցման գործընթացի սկզբնական շրջանում դպրոցականների ընկալման մակարդակը սերտորեն պայմանավորված է նրանց գործողություններով և պրակտիկ գործունեությամբ։ Նրանց ընկալմանը բնորոշ է ցայտուն արտահայտված հուզականությունը, առաջին հերթին ընկալումն այն երևույթների, առարկաների հատկանիշների, որոնք առաջացնում են անմիջական հուզական արձագանք։ Մանկավարժական այս հիմնավորմամբ է պայմանավորված դասարաններում զննականության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունը հզգացմունքային խթանիչների կիրառումը, որոնց կազմակերպումն ուսուցմանգործընթացում դպրոցականների ընկալումն աստիճանաբար ուսուցչի օգնությամբ սովորում են ոչ միայն պարզապես դիտել, այլև զննել, ուսումնասիրել,բացահայտել առարկաների ու երևույթների էական հատկանիշները, վերլուծել դրանք,որոշակի եզրահանգումներ անել՝ ձեռք բերելով կարողություններ, որոնք բարձրակարգ մտածողության բաղադրիչներն են և նպաստելու են հետագա ուսումնական գործունեության արդյունավետությանը։ Մանկավարժության մեջ «ուսուցում» եզրով սահմանվում է մի գործընթաց, երբ գիտելիքն ու հմտությունները կիրառելի են դառնում, որի արդյունքում փոխվում է երեխայի վարքագիծը, նաև այնպիսի գործընթաց, երբ սովորողը, գիտելիքներից ու տեղեկություններից բացի, կարիք ունի մտածողության մշակման և համագործակցային հմտությունների ձևավորման ու զարգացման: Այդ առումով անգնահատելի է խաղի՝ որպես ուսուցման և դաստիարակության մեթոդի կիրառումը դասագործընթացում, մասնավորապես տարրական դասարաններում: Արդյունավետ ուսուցումը նպաստում է երեխայի ինքնակազմակերպմանը և ինքնուրույնությանը. այն սկսվում է դպրոցականների համար ուսուցչի կողմից համապատասխան միջավայրի ստեղծումից: Խաղի միջոցով ճշգրտվում և ընդլայնվում են երեխայի պատկերացումները շրջապատի, բնության, հայրենիքի, ծնողների և ընդհանրապես

աշխարհի մասին, դաստիարակվում են ուշիմություն, աշխուժություն, զսպվածություն և այլ դրական հատկանիշներ:

1. Անձի յուրահատուկ հարաբերություն շրջապատող աշխարհի հետ:

2. Երեխայի յուրահատուկ գործունեություն, որը փոփոխվում է և զարգանում որպես նրա սուբյեկտիվ գործունեություն:

3. Երեխայի սոցիալականացման ու նրա կողմից յուրացված գործունեության ձև:

4. Յուրացման յուրահատուկ բովանդակություն:

5. Գործունեություն, որի ընթացքում տեղի է ունենում երեխայի հոգեկանի զարգացումը:

Սյուժետադերային երկերի ընթացքում լավագույնս դրսևորվում են երեխայի ազատության և ինքնուրույնության ձգտումները, ստեղծագործելու ցանկությունն ու կարողությունները, սեփական տպավորությունները և պատկերացումները, կարծիքն ու վերաբերմունքն արտահայտելու

հնարավորությունները: Սյուժետադերային խաղերն իրենց բնույթով ստեղծագործական են: Երեխան սյուժետադերային խաղերում արտացոլում է ոչ միայն առանձին տպավորություններ կամ պատկերացումներ, այլև տարբեր

իրադրություններ, անձնական փորձից փոքրիկ դրվագներ կամ հասարակական երևույթներ: Բնականաբար, նշվածը վերարտադրվում է սեփական դիրքորոշմամբ և պարունակում վերլուծություն և նոր մոտեցումներ: Սյուժետադերային խաղի նպատակն ու արդյունքը երևակայական են, սակայն երեխայի կողմից ընկալվում են ամենայն լրջությամբ և ջանքեր են պահանջում նրանից: Նպատակին հասնելու համար նա փորձում է լուծել բարդ, իրական կյանքում անլուծելի խնդիրներ, ինչը հնարավոր է երևակայական կերպարների ստեղծման միջոցով:Դերային խաղի ընթացքում նա փորձում է հորինել և ստեղծագործել: Սյուժետադերային խաղերի գլխավոր կառուցվածքային տարրը դերն է: Դերերի միջոցով երեխաները նույնացվում են իրենց

սյուժեի կերպարներին և փորձում արտացոլել կերպարին բնորոշ գործառույթներն ու հարաբերությունները: Ցանկացած դեր պարտադրում է վարքագծի և հարաբերությունների կանոններ, որոնք ակամայից յուրացվում են և գիտակցվում խաղի ընթացքում, դառնում սովորական ու ընդունելի և աստիճանաբար փոխանցվում իրական կյանք:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթադաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակությունը բնութագրվում է միասնական խնդիրների լուծմամբ: Աշակերտների մեջ արժեքային համակարգ ձևավորվում է <<Երաժշտություն>>, <<Տեխնոլոգիա>>, <<Կերպարվեստ>>, <<Մաթեմատիկա>>, <<Մայրենի>>, Նաև մյուս առարկաների դասաժամերին: Երաժշտության դասավանդումը նպաստում է սովորողի ինքնաճանաչմանն ու ինքնարտահայտմանը, նրա մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը, կատարողական առանձնահատկություններին միտված ուսումնական գործունեության, գեղագիտական և
բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը:

Մաթեմատիկայի դասավանդումը զարգացնում է տրամաբանորեն մտածելու կարողություն, փաստարկները ճիշտ և հետևողականորեն կառուցելու, մտքերը ճշգրիտ և պարզ արտահայտելու ունակություններ, իրավիճակը քննադատաբար գնահատելու, վերլուծելու, կարևորն ու երկրորդականը զանազանելու, անջատ փաստերը համադրելու, ընդհանրացումներ անելու հմտություններ:

Շատ կարևոր է «Տեխնոլոգիա» առարկայի դերը, որը նպաստում է շուկայական տնտեսության պայմաններում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորում է բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ, նախապատրաստում է նրան ինքնուրույն կյանքին:

Անհրաժեշտ է նշել նաև <<Ֆիզկուլտուրա>> առարկայի կարևորության մասին՝ սովորողներին առողջ ապրելակերպի կանոնները ուսուցանելու տեսանկյունից:

Իր յուրահատկության, բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ կերպարվեստը կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը:

Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում է՝

-Իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը.

-Վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը.

-Անձի ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը.

-Սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը.

-Ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը:

<<Կերպարվեստ>> առարկան իր մեջ ներառում է արժեքների մի մեծ փունջ՝ սովորողների մեջ սերմանելով մշակութային, բարոյահոգեբանական, գեղագիտական, հոգևոր, ժողովրդավարական, մշակութային,

սոցիալական, հասարակական ընտանեկան և այլ արժեքներ:

Մանկավարժական գործունեության մեջ մենք գործ ունենք մարդու հետ, ում պետք է առաջին հերթին մարդ մնալու արժեքը փոխանցենք:

Մարդ լինելու արժեքը, որն ամենակարևորն է աշակերտի արժեքային համակարգի հիմքում, փոխանցվում է <<Մայրենի>> առարկայի դասաժամերին: Երեխան մայրենի լեզվի կրողն է: Մայրենի լեզվի ուսուցումը, որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության հետ: Այն պետք է նպաստի սովորողի՝ բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը:

Մայրենիի ուսուցումը արժեքներին հաղորդակցվելու լավագույն միջոցներից է: Մայրենիի ուսուցումը չի ենթադրում և ներառում միայն լեզվական-քերականական

նախնական գիտելիքների ուղղակի փոխանցում երեխային, այլ դրանց միջոցով նաև ազգային հոգևոր ու բարոյական արժեհամակարգին հաղորդակցման ապահովում:

Ինչպես գիտենք, տարրական դասարաններում մայրենի լեզվի ուսուցումն իրականացվում է ճանաչողական - կիրառական արժեք ունեցող լեզվական գործնական մատչելի գիտելիքների յուրացման և գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցման ճանապարհով: Մայրենի խոսքի ընդարձակ հնարավորություններն օգտագործվում են երեխաների մեջ բարձրարժեք անձնային որակների ձևավորման և զարգացման գործում, ընդլայնվում են նրանց աշխարհաճանաչողությունն ու ինքնաճանաչողությունը, ինքնակրթությունը, ինքնազարգացման և ինքնադրսևորման հնարավորությունները: Հանրակրթության առաջին աստիճանի՝ տարրական ընդհանուր կրթության չափորոշիչներով նախատեսված պահանջների կատարումն ապահովում է տարրական դպրոցի շրջանավարտի ամբողջական նկարագրի ձևավորումը, մասնավորապես նրա կրթվածության մակարդակը՝ հիմնական դպրոցում ուսուցման համար անհրաժեշտ պատրաստականության, ընդհանուր զարգացման որոշակի մակարդակ, որն առանձացվում է երեք հիմնական ուղղություններով՝

- գիտելիքների պաշարի ձեռքբերում,
- կարողությունների և հմտությունների ձեռքբերում,
- արժեհամակարգի ձևավորում:

Ուսումնասիրվող նյութերում մեծ տեղ են գրավում խրատական առածներն ու ասացվածքները, որոնք արժեքային դաստիարակության տեսանկյունից մեծ նշանակություն ունեն: Վերջիններս երեխաների մեջ սերմանում են սեր, հոգատարություն:

Բարության և մարդասիրության դասեր են տալիս աստվածաշնչյան պատմությունները, որոնցից մի քանիսը ընդգրկված են դասագրքերում:

«Մարդու կյանքի ամենամեծ երջանկությունը ուրիշներին օգտակար լինելու մեջ է»:
«Գիտելիքները մարդուն կշիռ են տալիս, իսկ արարքները՝ փայլ»:
Ահա ինչն է ամենակարևորը մարդու համար:
Անգնահատելի է նաև առակների դերը անհատի դաստիարակության ու ձևավորման, չարն ու բարին ընկալելու գործում: Առակներն այլաբանորեն , ոչ ուղղակի կերպով աշակերտ ընթերցողներին բարոյական խրատ են ուղղում՝ դաստիարակելով խոհեմություն, ազնվություն և արդարություն, աշխատասիրություն, համեստություն, սակավապետություն: Առակների միջոցով է, որ դպրոցականը ընկալում է մայրենի լեզվի բարձրարժեքությունը ուսուցողական արժեքն անվիճելի է, քանզի այն, ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել երեխայի համար, կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով: Երեխան հասկանում է, որ առակի հերոս կենդանիները, բնության երևույթները կերպարանափոխված մարդիկ են: Շատ ավելի դյուրըմբռնելի ու պարզ է դառնում առակի հիմնական մտքի վերհանումը աշակերտների կողմից, եթե աշխատանքը զուգորդվում է առակի թեմային վերաբերողառածների, ասացվածքների կիրառմամբ:
Ինչպես նշեցինք, այս կամ այն դասանյութի ուսումնասիրումը հիմնականում իրականացվում է ընթերցանության միջոցով, որը հնարավորություն է տալիս կազմակերպել երեխաների ինքնուրույն գործունեությունը և նպաստել նրանց մտածողության, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Սակայն ընթերցանությունը պետք է մշտապես զուգակցել նաև այլ՝ ինչպես ավանդական, այնպես էլ փոխգործուն կամ ինտերակտիվ մեթոդներով: Այս դեպքում աշակերտները ոչ միայն ընթերցում են դասանյութը, այլ նաև նրանում պատկերվող իրողությունները, հերոսների արարքները,

հատկանիշները փորձում են կապել, համադրել և համեմատել կյանքում, առօրյայում հանդիպող նմանատիպ իրավիճակների, խնդիրների հետ, գնահատել հերոսների արարքները, արտահայտել իրենց վերաբերմունքը այդ ամենի վերաբերյալ, հարցեր տալ:

Ստեղծագործական, գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ խորհեն ընթերցածի շուրջ, գնահատեն նրանց արարքները, իմաստավորեն նրանց խնդիրները, համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ, ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Յուրաքանչյուր հայի համար արժեհամակարգի ամենակարևոր բաղադրիչներից մեկը ընտանիքն է: Ընտանիքը սիրո, հարգանքի, հանդուրժողականության աղբյուր է, որի վրա ձևավորվում է քաղաքակիրթ հասարակությունը:

Ընտանիքի և ծնողական սիրո մասին դասերը պետք է յուրաքանչյուր աշակերտի համար անձնային նշանակություն ստանա, որպեսզի երեխան հասկանա, որ ընտանիքը սկսվում է հենց իրենից, ծնողի նկատմամբ իր վերաբերմունքից. չէ՞ որ բոլոր ժամանակներում էլ պետության զարգացումը դատել են՝ ըստ ընտանիքի զարգացման աստիճանի և ընտանիքի հանդեպ պետության վերաբերմունքի:

Յուրաքանչյուր դաս իր մեջ ներառում է արժեհամակարգի տարբեր դրսևորումներ, ուստի ուսուցիչն իր պարտքը պիտի համարի գտնել այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնց միջոցով կարողանա վեր հանել թեմայում բարոյական նորմը, այն քննարկել, ձևավորել այնպես, որ սովորողի մեջ դառնա հիմնարար արժեք:

Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցական տարիքի երեխաների մեջ դաստիարակված հատկություններն ու բնավորության գծերը հետագայում վճռական ազդեցություն են ունենում նրա անձնավորության ձևավորման գործում:

Դրա համար անհրաժեշտ է դեռ վաղ տարիքից մեծ ուշադրություն դարձնել նրա բարոյական դաստիարակությանը: Բարոյական դաստիարակության ընթացքը

առաջին հերթին ենթադրում է բարոյական որակի ձևավորում: Բարոյական դաստիարկության ընթացքում, բարոյական գիտակցության հետ մեկտեղ ձևավորվում են անձնային կարևոր որակներ: Այդպիսի որակներից են, օրինակ, բարությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հայրենասիրությունը, մաքրասիրությունը, հավատարմությունը, ազնվությունը և այլն: Դպրոցական տարիքում նշված անձնային որակներն ու հատկությունները ձևավորելու տարբեր ուղիներ և մեխանիզմներ կան, սակայն ընդունված լավագույն միջոցներից մեկը սովորողի և գեղարվեստական գրականության, մասնավորապես հեքիաթի, ամուր կապն ապահովելն է: Հեքիաթների դերը սովորողի զարգացման գործում բազմազան է. սկսած երևակայությունը զարգացնելուց մինչև ճիշտ խոսքի ձևավորում: Հեքիաթը սովորողներին մատչելի լեզվով կյանք է սովորեցնում, պատմում չարի ու բարու մասին: Սովորողները ավելի հեշտ են ընկալում հեքիաթը, քան մեծահասակների դաստիարակչական քարոզները: Հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել սովորողի երևակայությունը և ստեղծագործական պոտենցիալը: Մանկական հեքիաթները ընդլայնում են սովորողի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի էմոցիոնալ և պատկերավոր, ձևավորվում է նաև հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն: Դպրոցական տարիքում է ձևավորվում այնպիսի կարևոր զգացմունք, ինչպիսին է ապրումակցումը, որն էլ սովորողին հնարավորություն է տալիս իրապես ապրել հեքիաթի հերոսների կյանքով՝ տխրել, երբ հեքիաթի հերոսների հետ դժբախտություններ են կատարվում, իրենց վրա վերցնել հեքիաթի հերոսների կերպարն ու վարքագիծը, ինչն էլ արդեն դաստիարակչական մեծ նշանակություն է ստեղծում, որպեսզի իրական կյանում ևս իրենք կարողանան դրսևորվել անձնային դրական որակներ, հատկություններ: Այդ զգացողությունը հնարավորություն է տալիս տեղափոխելու իրական կյանք սովորողի այն դրական հատկություններն ու որակները, վարքի ընդունված ձևերը, որոնք գովերգվում են հեքիաթում: Եվ մեծահասակների օգնությամբ սովորողի մեջ ձևավորվում է

հասարակայնորեն ընդունելի վարքի ձևեր և անձնային որակներ կամ դրվում են դրանց հիմքերը:

Սովորողներն իրականությունը պատկերավոր են ընկալում, իսկ հեքիաթները հենց նպաստում են իրականության ճիշտ ընկալմանը:

Հեքիաթներում միշտ հաղթում է բարին, ինչը երեխային օգնում է հաղթահարել կյանքի դժվարությունները՝ ենթագիտակցությունում ունենալով բարու հաղթանակի գաղափարը:

Այսպիսով, սովորողը տեղեկատվությունը վերաիմաստավորում է՝ գաղափարների ու միջոցների ստեղծագործաբար համադրելու միջոցով: Երեխաները պատրաստակամորեն մասնակցում են բարդ խնդիրների լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորել որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ: Չէ՞ որ գիտելիքն արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված հիմնավորապես: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները: Այդպիսով, զարգանում է նաև սովորողի քննադատական մտածողությունը, և նա աստիճանաբար կարողանում է տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը: Այս առումով շատ կարևոր է կրտսեր դպրոցականի մեջ սերմանել ընթերցասիրություն, զարգացնել գեղարվեստական ստեղծագործության գաղափարը հասկանալու, եզրահանգումներ, ընդհանրացումներ անելու կարողություններ:

Իսկ ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով, ի՞նչ հնարներով: Նախ՝ անհրաժեշտ է կրտսեր դպրոցականների մեջ ձևավորել սեր և ընթերցանության նկատմամբ այնպիսի վերաբերմունք, որ նպաստի նրանց մեջ անձնային բարձրարժեք որակների զարգացմանը, գրագետ ընթերցողի, կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը: Այո՛, ընթերցել, չի նշանակում կարդալ բառերը: Ընթերցողը պետք է գիտակցաբար ջանքեր գործադրի կարդացածը հասկանալու համար: Մենք՝ ուսուցիչներս, տիրապետելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներին ու հնարներին, կարող ենք օգնել մեր աշակերտներին խորհել

կարդացածի մասին: Իսկ հասկանալով ընթերցանությունն ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար: Հետևաբար, այն պետք է ապահովի կայուն գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ոչ միայն ուսումնական նյութի կամ ընդհանրապես մանկական գրականության ինքնուրույն ընթերցման առումով, այլև հնարավորություններ ստեղծի կարդացածի գործուն ընկալման համար:

Ընթերցանությունը պետք է հետաքրքրություն առաջացնի գիտելիքների հիմնական աղբյուր հանդիսացող գրքի նկատմամբ, նպաստի սովորողների հուզական-գեղարվեստական զարգացմանը: Ահա այս պահանջով էլ հարկավոր է կատարելագործել բնագրի վրա կատարվող աշխատանքների մեթոդներն ու ձևերը: Անհրաժեշտ է քիչ տեղ հատկացնել նախկինում տարածված հարց-պատասխանով զրույցի մեթոդին: Զրույցի փոխարեն օգտագործել բնագրի հենքը: Միաժամանակ պետք է ասել, որ ընթերցանության ուսուցման ժամանակակից դրվածքը բնութագրվում է ոչ այնքան նոր մեթոդների ու ձևերի կիրառմամբ, որքան դրանց նպատակային գործադրմամբ: Ընթերցանության դասավանդման պրակտիկայում նորովի մոտեցում է նկատվում նաև ստեղծագործության վերլուծության ոլորտում: <<Ինչպե՞ս կազմակերպել այդ գործընթացը>>, <<Ո՞րն է սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման առանձնահատկությունն այդ դասաժամերին: Ինչպե՞ս հետևել սովորողների գրական զարգացման գործընթացին>>. հարցեր, որոնք շատ կարևոր են

մեր օրերում, քանզի ընթերցանության ուսուցումը դիտվում է իբրև անձի դաստիարակության և զարգացման հիմնական միջոց: Այն սովորողին հնարավորություն է ընձեռում հարստացնելու ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնելու տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ հասկանալով ընթերցանությունն ակտիվացնում է մտածական

գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար: Հետևաբար, այն պետք է ապահովի կայուն գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ոչ միայն ուսումնական նյութի կամ ընդհանրապես մանկական գրականության ինքնուրույն ընթերցման առումով, այլև հնարավորություններ ստեղծի կարդացածի գործուն ընկալման համար:

Ընթերցանությունը պետք է հետաքրքրություն առաջացնի գիտելիքների հիմնական աղբյուր հանդիսացող գրքի նկատմամբ, նպաստի սովորողների հուզական-գեղարվեստական զարգացմանը: Ահա այս պահանջով էլ հարկավոր է կատարելագործել բնագրի վրա կատարվող աշխատանքների մեթոդներն ու ձևերը: Անհրաժեշտ է քիչ տեղ հատկացնել նախկինում տարածված հարց-պատասխանով զրույցի մեթոդին: Զրույցի փոխարեն օգտագործվում է բնագրի հենքը: Միաժամանակ պետք է ասել, որ ընթերցանության ուսուցման ժամանակակից դրվածքը բնութագրվում է ոչ այնքան նոր մեթոդների ու ձևերի կիրառմամբ, որքան դրանց նպատակային գործադրմամբ[5]: Ուսուցման կազմակերպման ընթացքում կարելի է կազմակերպել նաև գրական ունկնդրումներ, որտեղ պետք ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր՝ խոսքի յուրացումը սերտորեն կապելով երեխայի առօրյայի և ամենօրյա գործունեության հետ:

Այսպիսով՝ մենք պետք է ճիշտ ուղղորդենք աշակերտներին, առավել ևս ներկայիս տեղեկատվական բազմանյութ իրականության մեջ, որպեսզի իրենց ուրույն դիմագիծը ճիշտ ձևավորեն արժեքային համակարգի կոնտեքստում և երբեք չկորցնեն այն: Կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ վերաբերմունքը սովորողների մեջ ձևավորվում է կրթության ընթացքում ստացած տեղեկույթի

միջոցով: Կրթության միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ:

---

[5] Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխչյան, Սուսաննա Գրիգորյան, Վաչագան Սարգսյան, Հեղինե Խաչատրյան, Դլենա Ջիլավյան, Մայրենի 2-4. ուսուցչի ձեռնարկ, Երևան 2011:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական տարիքը կարևոր շրջան է անձի կայացման և զարգացման համար,իսկ կրտսերը՝ ամենակարևորը, այն է կախված էերեխայի շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից, դրանք են ընտանիք, դպրոց, ընկերներ։ Դպրոցում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան սովորողների դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույնություն,ինչ-որ նոր բան սովորելու հակում, հետաքրքրասիրություն, որոնք էլ պետք է հիմքհանդիսանան երեխայի «ես»-ի հետագա ամրացմանն ու կայունացմանը։ Վաղ տարիքից պիտի ակտիվորեն զարգացնել երեխայի երևակայությունը, ուշադրությունն ու մտածողությունը։

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում։ Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են։ Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում։ Այսպիսով, ուսուցիչն անսահման սիրով ու նվիրումով, հոգու ջերմությամբ, պատասխանատվության գիտակցումով, մարդասիրությամբ, հոգատարությամբ, կենսուրախությամբ և էթիկայով պետք է գտնի երեխայի հոգու գաղտնարանները տանող բանալին։

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Կրուպսկայա, Ուսուցչի մասին, Երևան -1960, էջ185։
2. Սուխոմլինսկի Վ. Ա. Սիրտս նվիրում եմ երեխաներին. Կոլեկտիվ դաստիարակելու մեթոդիկա, Երևան <<Լույս>> 1986։
3. Հանրակրթության պետական չափորոշիչ
4. Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխչյան, Սուսաննա Գրիգորյան, Վաչագան Սարգսյան, Հեղինե Խաչատրյան, Դլենա Ջիլավյան, Մայրենի 2-4. ուսուցչի ձեռնարկ, Երևան 2011։
5. Համացանցային նյութեր